Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՎԽՎ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հուլիսի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ պրն Ռենե վան դեր Լինդենին: Սա Վան դեր Լինդենի երկրորդ այցն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Առաջին անգամ նա Մայր Աթոռում եղել էր 2005 թ. օգոստոսին:

Նորին Սրբությունը ողջունեց Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահի այցը ամենայն հայոց սրբություն սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ անդրադառնալով Հայաստանում, ինչպես նաև նախորդ տարի Աստանայում հոգևոր առաջնորդների երկրորդ գագաթաժողովի ընթացում իրենց ունեցած հանդիպումներին: Վան դեր Լինդենն իր գոհունակությունը հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ շրջակա միջավայրի պահպանման, ինչպես նաև տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատման ուղղությամբ աշխատանքների համար:

Ամենայն Հայոց Հայրապետը և նախագահ Ռենե վան դեր Լինդենը քննարկեցին Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման հարցը, ինչով պայմանավորված է արցախաբնակ հայերի ազատ և ապահով կյանքը: Հանդիպման ընթացքում խոսվեց նաև տարածաշրջանում հայկական մշակութային հուշարձանների ոչնչացման սպառնալիքի և հարևան երկրներում Հայ Եկեղեցու կարգավիճակին վերաբերող խնդիրների մասին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ
ՀԱՆԴԻՊՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ